ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022Թ. ԱՊՐԻԼԻ 26-28-Ը ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՄԱՅՆԻ ՖՐԱՆԿՖՈՒՐՏ) ԱՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, 2022թ. ապրիլի 26-ից 28-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Հրավերը ստացվել է ԳԴՀ վերականգնման վարկերի բանկի (KfW) կողմից

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն Գերմանահայկական հիմնադրամի դիտորդ խորհրդի հերթական նիստին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Տեղի է ունեցել Գերմանահայկական հիմնադրամի դիտորդ խորհրդի հերթական նիստը:

   Քննարկվել են բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացման ընթացքը և այդ համատեքստում գերմանահայկական համագործակցության հարցերը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Հանդիպում է տեղի ունեցել KfW վերականգնման վարկերի բանկի Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի դեպարտամենտի էներգետիկայի բաժնի ղեկավար, «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» ծրագրի ղեկավար Թոմաս Այզենբախի հետ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Քննարկվել է «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» ծրագրի ընթացքը, առկա խոչընդոտները: Բանկը պատասխանատվություն է ստանձնել հնարավորինս սեղմ ժամկետում արձագանքել առկա խնդիրներին և վերացնել խոչընդոտները:

Կազմվել է Գերմանահայկական հիմնադրամի դիտորդ խորհրդի հերթական նիստի հաշվետվությունը:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Հստակեցվել են Գերմանահայկական հիմնադրամի դիտորդ խորհրդի՝ Երևանում կայանալիք հաջորդ նիստի ժամկետները:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ԱՄԻՍ ԱՄՍԱԹԻՎ**

02.05.2022թ.